# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## Իջևան քաղաքային համայնքի ավագանի
## ՈՐՈՇՈՒՄ
*28 հունիսի 2017թ. N 30*

### 1. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ համայնքի մանկապարտեզներ հաճախող երեխաները հիվանդության պատճառով հաճախակի բացակայում են, չեն ներկայանում մանկապարտեզ, սակայն նրանց սպասարկման վճարը գանձվում է ամբողջ ամսվա համար:

Հաշվի առնելով վերոհիշյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետով.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Համայնքի մանկապարտեզներից հիվանդության պատճառով բացակայած երեխաների վճարը յուրաքանչյուր ամիս գանձել հաճախած օրերի հաշվարկով /բժշկական տեղեկանքի առկայության դեպքում/:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*28 հունիսի 2017թ. N 31*

## 2. ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևանի քաղաքապետարան է դիմել ՀՀ Քննչական կոմիտեի դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը, Իջևան քաղաքի Ա. Մելիքբեկյան փողոցի թիվ 5 հասցեի հարակից տարածքում հողատարածք տրամադրելու խնդրանքով՝ դեպի նշված հասցեի շինության 2-րդ հարկում գտնվող և հիմնարկին պատկանող տարածք, մուտքի առանձին արտաքին աստիճաններ կառուցելու նպատակով:

Իջևանի քաղաքապետը Իջևան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել վերոհիշյալ դիմումը և առաջարկել, այդ նպատակով, համաձայն ՀՀ «Հողային օրենսգրքի» 75 հոդվածի 1-ին կետի 1-ին մասի, Ա. Մելիքբեկյան փողոցի 53.56 քմ. մակերեսով հողամասը անհատուց մշտական օգտագործման իրավունքով տրամադրել ՀՀ Քննչական կոմիտեի դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկին:

Իջևան համայնքի ավագանին քննարկելով վերը նշվածը և ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 75 հոդվածի 1-ին կետի 1-ին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ պահանջներով՝

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

Տալ հավանություն Իջևանի քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Ա. Մելիքբեկյան փողոցի թիվ 5 հասցեի հարակից 53.56 քմ. մակերեսով հողամասը անհատուց մշտական օգտագործման իրավունքով տրամադրել ՀՀ Քննչական կոմիտեի դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկին՝ դեպի նշված հասցեի շինության 2-րդ հարկում գտնվող և հիմնարկին պատկանող տարածք, մուտքի առանձին արտաքին աստիճաններ կառուցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*28 հունիսի 2017թ. N 32*

3. ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևանի քաղաքապետարան է դիմել ՀՀ պաշտպանության նախարարությունը, Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 103 հասցեի հարակից տարածքում հողատարածք տրամադրելու խնդրանքով՝ բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու նպատակով:

Իջևանի քաղաքապետը Իջևան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել վերոհիշյալ դիմումը և առաջարկել, այդ նպատակով, համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 605 հոդվածի, Բլբուլյան փողոցի թիվ109 հասցեում 1134.1 քմ. մակերես հողամասով 349.88քմ արտաքին մակերեսով երկաթբետոնե հիմքերը նվիրաբերության կարգով տրամադրել ՀՀ պաշտպանության նախարարությանը:

Իջևան համայնքի ավագանին քննարկելով վերը նշվածը և ղեկավարվելով ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 605 հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ պահանջներով՝

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

Տալ հավանություն Իջևանի քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ109 հասցեում 1134.1 քմ. մակերես հողամասով 349.88քմ արտաքին մակերեսով երկաթբետոնե հիմքերը նվիրաբերության կարգով տրամադրել ՀՀ պաշտպանության նախարարությանը բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*28 հունիսի 2017թ. N 33*

## 4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԼԲՈՒԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 73 ՇԵՆՔԻ ԹԻՎ 90 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 73 շենքի թիվ 90 բնակարանը հանդիսանում է համայնքային սեփականություն:
Հիմք ընդունելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ բնակարանի կարգապահ վարձակալ է հանդիսանում Անուշ Սամվելի Մնացականյանը, որը ժամանակին չի կարողացել սեփականաշնորհել բնակարանը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 73 շենքի թիվ 90 բնակարանը, որը հանդիսանում է համայնքային սեփականություն, անհատույց օտարել Անուշ Սամվելի Մնացականյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ԿԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*28 հունիսի 2017թ. N 34*

5. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով առանց մրցույթի կառուցապատման իրավունքով հողամասեր հատկացնելու մասին:

Ղեկավարվելով,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1.Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով՝ աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը համաձայն աղյուսակի.

| hh | Նպատակը | Հասցե | Մակերեսը/քմ |
|---|---|---|---|
| 1 | Ընդհանուր օգտագործում | Սպանդարյան փ. | 19.88 |
| 2 | Ընդհանուր օգտագործում | Արցախյան փ. | 19.5 |
| 3 | Ընդհանուր օգտագործում | Արցախյան փ. | 17.5 |
| 4 | Ընդհանուր օգտագործում | Սպանդարյան փ. | 17.5 |
| 5 | Ընդհանուր օգտագործում | Բլբուլյան փ. | 17.0 |
| 6 | Ընդհանուր օգտագործում | Բլբուլյան փ. | 24.0 |
| 7 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 17.5 |
| 8 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 22.0 |
| 9 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 25.0 |
| 10 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 6x19.8 |
| 11 | Ընդհանուր օգտագործում | Ազատամարտիկների փ. | 151.9 |
| 12 | Ոչ բնակելի տարածք | Մայիսի 28-ի փ. | 40.8 |
| 13 | Ընդհանուր օգտագործում | Բլբուլյան փ. | 24.0 |
| 14 | Ընդհանուր օգտագործում | Աբովյան փ. | 36.0 |
| 15 | Բնակելի կառուցապատում | Նալբանդյան փ. փ. | 101.9 |
| 16 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 81.0 |
| 17 | Հասարակական կառուցապատում /ընդ./ | Արցախյան փ. | 53.41 |

| | | | |
|---|---|---|---|
| 18 | Ընդհանուր օգտագործում | Աբովյան փ. | 19.88 |
| 19 | Ընդհանուր օգտագործում | Ա. Մելիքբեկյան փ. | 34.0 |
| 20 | Ընդհանուր օգտագործում | Երևանյան փ. | 96.0 |
| 21 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 32.0 |
| 22 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 19.8 |
| 23 | Բնակելի կառուցապատում | Երևանյան փ. | 400.0 |
| 24 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 6x19.8 |
| 25 | Բնակելի կառուցապատում | Մետաղագործների փ. | 32.0 |
| 26 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտոտնակ/ | Ասլանյան փ. | 128.3 հող/128.3շին |
| 27 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 35.0 |
| 28 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 20.0 |
| 29 | Բնակելի կառուցապատում | Անկախության փ. | 28.0 |
| 30 | Հասարակական կառուցապատում /ինք. ավտոլվ. կետ/ | Վասիլյան փ. | 24.35 հող/48.7 շին |
| 31 | Ընդհանուր օգտագործում | Անկախության փ. | 26.95 |
| 32 | Հասարակական կառուցապատում /ինք. աստիճ./ | Աբովյան փ. | 73,3 հող /139,95 շին |
| 33 | Ընդհանուր օգտագործում | Ազատամարտիկների փ. | 19,8 |

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*28 հունիսի 2017թ. N 35*

6. <<ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևանի քաղաքապետարան է դիմել «Հայկական Կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպությունը, Իջևան քաղաքի Ղարագյոզյան փողոցի թիվ 47 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքից տարածք տրամադրելու խնդրանքով:

Իջևանի քաղաքապետը Իջևան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել վերոհիշյալ դիմումը և առաջարկել, Իջևան քաղաքի Ղարագյոզյան փողոցի թիվ 47 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքից 94.8քմ մակերեսով տարածք անհատուց մշտական օգտագործման իրավուքով տրամադրել «Հայկական Կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպությանը:

Իջևան համայնքի ավագանին քննարկելով վերը նշվածը և ղեկավարվելով << «Տեղական ինքնակառավարման մասին» << օրենքի 16 հոդվածի 20-րդ պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ է.

Տալ հավանություն Իջևանի քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Ղարագյոզյան փողոցի թիվ 47 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքից 94.8քմ մակերեսով տարածք անհատուց մշտական օգտագործման իրավուքով տրամադրել «Հայկական Կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*28 հունիսի 2017թ. N 36*

## 7. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Երևանյան փողոցում 78.3քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0093-0050/, Երևանյան փողոցում 564.1քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0093-0015/ և Երևանյան փողոցում 360.11քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0202-0055/ հողամասերը կադաստրային քարտեզում արտացոլված են, որպես ֆիզիկական անձանց պատկանող բնակելի կառուցապատման հողամաս, սակայն որևէ անձի անվամբ հաշվառված չեն և դրանց նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք գրանցված չեն:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Երևանյան փողոցում 78.3քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0093-0050/, Երևանյան փողոցում 564.1քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0093-0015/ և Երևանյան փողոցում 360.11քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0202-0055/ հողամասերի նկատմամբ Իջևան համայնքի սեփականության իրավունքը գրանցելուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*28 հունիսի 2017թ. N 37*

8. **«Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը միանալու մասին**

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն է եղել միանալու կլիմայի և էներգախնայողության մասին «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Տալ համաձայնություն միանալու «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ստորագրելու անդամագրման համար անհրաժեշտ փաստաթղթերը և կազմակերպել «Կայուն զարգացման գործողությունների ծրագրի» մշակման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*28 հունիսի 2017թ. N 38*

9. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԼԲՈՒԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 33 ՇԵՆՔԻ ԹԻՎ 32 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 3 շենքի թիվ 32 բնակարանը հանդիսանում է համայնքային սեփականություն:
Հիմք ընդունելով ..Տեղական ինքնակառավարման մասին << օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ բնակարանի կարգապահ վարձակալ է հանդիսանում Թաթուլ Թոռնիկի Շահինյանը, որը ժամանակին չի կարողացել սեփականաշնորհել բնակարանը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 3 շենքի թիվ 32 բնակարանը, որը հանդիսանում է համայնքային սեփականություն, անհատույց օտարել Թաթուլ Թոռնիկի Շահինյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

## ՈՐՈՇՈՒՄ

*28 հունիսի 2017թ. N 39*

### 10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի 16.05.2017թ N 06/11.2/2728-17 գրությունը և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 49 դրական եզրակացությունն, ու ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի (բնակավայրերի) գլխավոր հատակագծի 0.242489 հա մակերեսով հողամասի /Երևանյան փողոցի 51/4/ նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը համաձայն հավելվածի.

Հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը

| Հողամասի առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական գործառնական նշանակության | Բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության |

2. Հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 ,,Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում,, շինարարական նորմերի պահանջները:

3. ,,Քաղաքաշինության մասին,, ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի 30-րդ մասով սահմանված կարգով նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1720-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող հետևանքները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ